«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
հասարակական կազմակերպություն
Общественная организация
“ОБЩИННОЕ РАЗВИТИЕ”
“COMMUNITY DEVELOPMENT”
Non-Governmental Organization
0 8 9 1 1 7 0 5

Address: 29 Andranik St.,
3601 Yeghegnadzor, Vayots Dzor, RA
Tel: +374 77 272 202
E-mail: info.communityngo@gmail.com

«Համայնքային զարգացում» ՀԿ-ն «Գյուղական բնակավայրերի բնակչության կենսապայմանների բարելավում» ծրագրի շրջանակում նախատեսում է հոկտեմբերի 1-ից Ջերմուկ քաղաքում իրականացնել «Հագուստի մոդելավորում» վեցամսյա արհեստագործական կրթական ծրագիր:
Ծրագրի նպատակն է աջակցել թվով 7 կանանց՝ զարգացնելով նրանց մասնագիտական հմտությունները և նպաստելով նրանց կենսապայմանների բարելավմանը:
Ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու համար մենք փնտրում ենք հմուտ մասնագետներ, որոնք ունեն համապատասխան գիտելիքներ և կարող են դրանք փոխանցել կանանց՝ խթանելով նրանց մասնագիտական հմտությունները և ստեղծագործական ներուժը:

Խնդրում ենք ներկայացնել ձեր գնային առաջարկը՝ հաշվի առնելով Հավելված 1-ում նշված ուսուցման թեմաներն ու դրանց համար նախատեսված ժամաքանակը.
Ծրագրի շրջանակում մեր կողմից առաջարկվող/պահանջվող ուսուցման թեմաներն են.
Ծրագիրը ենթակա է մասնակի փոփոխության ընդհանուր քննարկման շրջանակում:

**Ծրագրի հիմնական նպատակներն են՝**

- Հագուստի մոդելավորման և կարուձևի հմտությունների ուսուցանում,
- Արցախահայ և տեղացի կանանց հմտությունների և ստեղծագործական մոտեցման խթանում,
- Տեղական արտադրանքի զարգացում,
- Սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ արհեստագործության խթանման միջոցով:

Նախատեսվում է դասընթացն անցկացնել շաբաթական երեք օր՝ օրական երեք ժամ տևողությամբ:

**Դասընթացավարի պահանջվող փորձը և հմտություններն են.**

- Առնվազն երկու տարվա մասանգիտական փորձառություն իսկ դասավանդման փորձը կդիտվի որպես առավելություն,
- Ոլորտի որակավորում,
- Տեղահանվածների և խոցելի խմբերի հետ աշխատանքային փորձը կդիտարկվի որպես առավելություն:

Եթե հետաքրքրված եք առաջարկով և ունեք համապատասխան փորձառություն, խնդրում ենք ուղարկել ձեր գնային առաջարկը մինչև սեպտեմբերի 15-ը, ժամը՝ 18:00, gnum.communityngo@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Գնառաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ըստ ժամավճարի՝ առանց հարկերի և պարտադիր վճարների: